

Անմնացորդ նվիրում



Ավագ մանկավարժ Անիկ Մեսրոպյան



II հերթի դաստիարակ Լուսինե Գալստյան

Եվ ինչը չի կարողանում տարբեր հանգամանքների պատճառով տալ ծնողը կամ խնդիրներ է ունենալ նրա հետ շփվելիս, տալիս, լրացնում, շտկում է նախակրթարանը, որտեղ դաստիարակների աշխատանքն ամենօրյա ընդհանուր ստեղծագործական որոշումների ու հետևողականության շնորհիվ հագենում է նորանոր ծրագրերով ու ծերոնարկումներով։ Տնօրենի խորին համոզմամբ՝ իր դաստիարակները հոգեբանական որոշակի մոտեցումների տիրապետելուց բացի, ունեն երեխայի երևակայության մեջ բափանցելու, ստեղծագործելու կարողություն։ Եվ պիտի հասնեն այն բանին, որ երեխան ամեն անգամ կրկին հանդիպելու ցանկությամբ հրաժեշտ տա իրենց։

Դավիթաշենի թիվ 219 կրթահանձնարկի ամեն նոր օրը երեխաների համար դառնում է անակնկալներով լեցուն, նշանափորվում է բազմաթիվ միջոցառումներով։ Մեծ շուրջով նշվում են ազգային տոնակատարությունները, կազմակերպվում սաների ձեռքբերով պատ-



I հերթի դաստիարակ Շահնինե Ջարությունյան

րաստիարակ ինքնատիփ գործերի ցուցահանդեսներ, նախաձեռնվում են թատերականացված միջոցառումներ։

Իսկ գեղեցիկ ձևավորված և խնամքով նախապատրաստված սենյակներում կազմակերպված տրամաբանական ու խաղալիքների օգնությամբ մտավարժաները նպաստում և հնարավորություն են ստեղծում երեխայի մտահայեցողության զարգացնան համար։

Անուշիկ Ղուկասյանը հաճախ է գովեստի խոսքեր ու շնորհակալագրեր ստանում քաղաքապետարանից։

ԽԱՀՔԱՐ ՊՐԱԿԱՅՈՒՄ

Պրահայում մինչև հաջորդ տարվա ապրիլի 24-ը խաչքար է տեղադրվելու քաղաքի կենտրոնում գտնվող Ֆրանց Վերֆելի տաճ դիմաց՝ Նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին։

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՎԵՐԱՆՈՒՄ ԵՆ

Վերջին 10 տարիներին Թուրքիայում ազգականների միջև ամուսնությունները 20 տոկոսից հասել է 23-ի, ինչի հետևանքով նրանցից ծնված հաշմանդամ երեխաների քանակը հասել է 100 հազարի։ Պրոֆեսոր Յալուք Թոփալովուն հայտա-

րարել է, որ «մկանների հյուծվածություն» հիվանդությունը ժառանգական է և ավելի հաճախ դրսնորվում է տղա երեխաների մոտ, միաժամանակ նշելով, որ դա ավելի հաճախ մկատվում է ազգականների ամուսնությունից ծնված երեխաների մոտ։ Նա ասել է, որ այդ հիվանդությունը հիմնականում արտահայտվում է երեխայի կյանքի 5-6-րդ տարիներին։

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՍԱԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ

«Շուշի» հիմնադրամը ներկայում ամենաշուրջ է «Ովկ է ցանկանում, որ հիմավորուց Շուշի բերդաքաղաքը դառնա համայն հայության կրթամշակութային մայրաքաղաքը» համահայկական

հանրաքվե։ Վերջերս Ստեփանակերտում բացված «Շուշի» բարեգործական հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի գրասենյակից՝ ի հավաստումն համաձայնության, հանրաքվեի մասնակիցները

Շայաստանում և Սկյուռքում

«Յունիբանկի» «241001541929 EUR»

և «241001141928», իսկ Արցախում՝

«Արցախբանկի» «223001030137»

հաշվեհամարներին են փոխանցում

նվազագույնը 500 դրամ (1 եվրո կամ դոլար) խորհրդանշական գումար՝

նշելով անուն, ազգանուն, բնակության

վայրը, դրոնք համարվելի

քափանցիկությունը ապահովելու

նպատակով կիրապարակվեն

հիմնադրամի «www.shoushi.am» կայքում։

Կարճադոշի օրը ժողովրդական պոն



Կարճադոշը Լեռնահովիտ գյուղը գոտևորող սարերից մեկն է, որի վրա, հնուց եկող զրուցների համաձայն, 4-5-րդ դարերում ապրել և հավերժական հանգրվան է գտել Սուրբ Ստեփանոս Նախավկա անունով ճգնավորը: Այնուհետև նրա կացարանն ու շիհինը հսկել են երեք կույրեր, որոնք հետո քարացել են: Լեզենդ է, թե իրականացրյալն, բայց պատմում են, որ սարի ընդելքում թունելների մի ողջ համակարգ կա, որոնք սարի ստորոտում եղած քարհանքները կապում են գյուղի հետ: Ասում են, որ քարհանքում աշխատող բանվորներից մեկը մի գիշերվա մեջ հարստացել է, և մեկնելով Թթիլսի, աղա է դարձել: Շատ է պատահել, որ գյուղում նոր տան համար հիմք փորելիս մարդիկ մեծածավալ կարասներ են գտել, որոնց մեջ հացահատիկ և ալյուր հիշեցնող մնացորդներ են եղել: 19-րդ դարի 30-40-ական թվականներին Լեռնահովիտի (նախսկին Ղարաքիլիսան) բնակչության հուշեր են մնացել, որ գյուղի տեղում ոչինչ չի եղել, բայց սրբատեղին՝ Կարճադոշը եղել է, որ Կարճադոշի տակ մեծ եկեղեցի կա թաղված, որ գյուղի տեղում քաղաք է եղել «Քյուչուր Խստանքուլ», այսինքն «Փոքր Ստամբուլ»: Ընդ որում սրբատեղի մասին երազ է տեսել գյուղի ծերունի մարդկանցից մեկը: Շատերի նման Կարճադոշը նույնպես համարյա մոռացվել է սովորական տարիների ընթացքում:

Ու երբ 1995 թ. հունիսի 17-ին, տասնյակ տարիների ընդմիջում հետո, Կարապետյանների ընտանիքը նախաձեռնեց Կար-

ճաղողի օրվա հարությունը, գյուղի մեծահասակները աստիճանաբար վերիիշեցին սրբատեղին կատարվող ուխտագնացության մանրանասներն ու Սրբի հրաշագործությունները: Իսկ մեկ տարի անց սրբավայրում մատուռ կառուցելու նախաձեռնությամբ հանդես եկավ գյուղի Յայրապետյան ընտանիքի ներկայուցից Արարատ Յայրապետյանը: Եկեղեցին օծվեց 2001թ.

Անցած տարիներն աստիճանաբար վերականգնեցին ու հղեցին Կարճադոշի ուխտի ավանդությունները: Սկզբում որպես մատուռ, իսկ 2001 թ. հայ Կարողիկը եկեղեցու Տաշիրի հոգևոր հովիվ Յայր Գևորգ Պայանի կողմից որպես եկեղեցու օծված շինությունը դարձավ հավատավոր մարդկանց հույսի և աղոթքի վայր: Իսկ Կարապետյանների ընտանիքի մշտական ուշադրությունն ու հոգացությունը Կարճադոշի օրը դարձրին ժողովրդական տոն:

Ու ամեն տարվա նման, այս անգամ նույնպես հունիսի 17-ին Կարճադոշ ուխտի էին եկել հայ և այլազգի ահել ու ջահել, քրիստոնյա ու աղանդավոր, հավատացյալ ու արեհստ: Նույնիսկ ամենափոք հնարավորության դեպքում այդ օրը գյուղ են գալիս արտերկրում ապրող շատ լեռնահովիտցիներ, որոնք սարը ուխտի են բարձրանում, մատադ են անում...

Այդ օրը Կարապետյան գերդաստանը ողջ գյուղին մատադ է բաժանում:


Աղասի ՅՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ

ԱՍՊԵՏԸ

Մբաւտի մասին է խոսքը: Լիճք գյուղում ծնված Գարեգին Լպուտյանի որդին: Չեմ կարող մտաքերել՝ ո՞ր թվականին օպերայի թատրոնի բեմում ինչ մրցաշար էր (լինելով թունդ շախմատատեր՝ առիթը բաց չէի թողնում ներկա լինել խաղի ընթացքին): Առաջին անգամ եղանակ տեսա Սմբատին ու... հիացած նրա արտաքինով՝ նիհարավուն, բարձրահասակ, կոպիտ տաշած, բայց շատ առնական դեմքով, դեմք, որ արտահայտում էր կամք և արժանապատվություն, միով բանիկ՝ ազնվականի կեցվածքով երիտասարդ: Յեռվից հեռու դեռ անժանոր հմայվեցի նրանով: Ինչ-որ մի հարազատական զգացում արթնացավ ին մեջ ու չգիտեմ ինչու մտածեցի՝ աշխարհի չենափիններ ունեցել ենք, տաղանդներ ինչքան ասես (անուններ չեն թվում, որովհետև, իսկապես հուլրախտություն մեզ, նրանք շատ-շատ են), բայց Սմբատ Լպուտյան չենք ունեցել: Նկատի ունեն ոչ միայն նրա բնաստու տաղանդը, այլև նարդկային նրա տեսակը: Բախտ վիճակվեց ծանրանալ նրա հետ և էսօր հպարտությամբ ասում են, որ նրա ընկերն են: Նա իմ փոքր, սիրելի, խելացի, ապերիկ հպարտությունն է... Յիմա անեն անգամ նրան հանդիպելուց հետո սիրոս լցում է մի թանձու ուրախությամբ ու ծերմությամբ ու նաև գոհանում են, որ մեր ազգը ծնել է էտախի տաղանդ, էտախի ազնվարար մարդու: Պարզապես անհնար է գերագնահատել էն ամենը, ինչ անում է էսօր Սմբատը Յայրաստանի շախմատային կյանքում: Էս պահին նա դեկավորում է իր իսկ ստեղծած «Հայիմատային ակադեմիան», որն արդեն նրա շանթերով երկու տասնյակից ավել մասնածյուղեր ունի մարզերում ու շրջաններում, անշուշտ նաև Արցախում: Յարկ է տեսնել, թե ինչ ոգևորությամբ, ինչ նվիրու-

մով է առաջ տանում էր գործը՝ հազար ու մի խոչընդոտներ հաղբարելով: Յավանացած են, որ «Ակադեմիայի» մեծ արյունքներին ականատես կլինենք ոչ շատ ուշ: Վար ամողի պես ինաստուն, հմուտ, անաղմուկ կառուցում ու հարստացնում է մեր հոգևոր աշխարհը, և մեր ինքնատիպության, գյուրյան մեր հենքն ու հիմքն է: Մարդ քաղաքացի: Տարիներ շաղունակ ուշի-ուշով հետևել են նրա պահվածքին, նրա գործունեությանը, նրա ելույթներին, նրա փայլուն հաղթանակներով հիացել են միշտ, իսկ երեմնի անհաջողությունների ժամանակ տիրել բնականաբար, բայց սա չէ կարևոր: Կարևորն են է, որ մեր կյանքում էսօր Սմբատ Լպուտյան կա, կարևորն են է, որ էսօր համաշխարհային օլիմպիադայի մեծագույն հաղթանակի գործում Սմբատն է ունեցավ իր բաժինը ու իր ընկերների հետ պարզեց մեզ երջանկության աստեղային ժամաներ: Ինչ՝ պրյունք էր ևս անգերազնահատելի հաղթանակը՝ հարցունը են ինքու ինձ: Կարծում են՝ առաջին մեր անկախության, մեր պետականության: Եվ իհարկէ Արցախային պատերազմի սխրանքի շարունակությունն էր: Սա մեր ցեղի հոգևոր անսպառ ուժի վկայությունն է նաև: Այս, ապազվում է, որ եթե պետությունը, պետական այրերը Սերժ Սարգսյանի օրինակով հովանավոր ու տեր լինեն, հայն ընդունակ է ուզած բնագավառում սրտում արևոներ ծնել, Յան Սահյանի տողերով ասած «ինքն իրենց բուսում, աճում է...»: Ցեղը հայոց զարդնը ու ապրում, սրբն մեր առաջին հաղթանակներն են, առջևում մեզ մեծագործ գործեր են սպասում, անաւելի նվաճումներ: Երկրում էսօր թելադրում ու մթնոլորտ են ստեղծում կիսագրագետն, մութ կենսագրություններով արարածներ, իրենց միստ ու կացով, մտա-

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՈՒՅԱՄԵԴԱԼ ՀԱՆՁՎԵՑ ԲԱԶՄԱՎԱՍԱԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԻՆ



Հուլիսի 28-ին մարդաշատ էր Լեռնահովիտի Սարգիս Կարապետյանի անվան դպրոցը: Յանդիսավոր ծիծոցանան հավաքվածները գիտեին, որ Լեռնահովիտի դպրոցի նախկին տնօրեն, բազմավաստակ մանկավարժ, բարեգործ, գյուղի համայնքի հարգված ու միրված անդամ Սարգիս Կարապետյանին ՀՀ վարչապետի հուշանմեղալ էր հանձնվելու:

Հուշանմեղալ հանձնման հանդիսավոր արարողությունը բացի Լեռնահովիտի գյուղապետ Արշակ Կելիցյանը: Ողջունելով ներկաներին, նա իրավամբ նշեց:

- Այսօր տոն է ողջ Լեռնահովիտի համար, քանի որ ընկեր Կարապետյանը նաև հավաքական կերպար է գյուղի և յուրաքանչյուր լեռնահովիտցու համար:

Խոսելով Սարգիս Կարապետյանի մանկավարժական գործունեության մասին, դպրոցի տնօրեն Ռուբեն Մուրադյանը առանձնացրեց այն մեծ ներդրումը, որ նա ունեցել է դպրոցի զարգանան և սերունդների կրթության ու դաստիարակության գործում:

- Ընկեր Կարապետյանը 55 տարի ոչ միայն ուսուցչություն է արել մեր դպրոցում, այլ նաև դեկավարել է դպրոցը, - ասաց նա: - Բոլոր այդ տարիներն են եղել են քրտնաշան աշխատանքի, մաքառման ու դժվարությունների հարթահարման տարիներ: Նա երեք չի հանգստացել ձեռք բերածով ու հաջողություններով, որոնք այնքան շատ են: Նա միշտ իր ստեղծագործ աշխատանքը շաղկապել է մանկավարժական առաջավոր փորձին ու մերողներին: Նրա աշխատանքի բնութագրից կողմերից են նաև համակ ուշադրությունը գործընկերների սոցիալական հարցերին և հոգածարությունը աշակերտների նկատմամբ:

Իր խոսքի վերջում Ռ. Մուրադյանը նշեց, որ չնայած Սարգիս Կարապետյանն արդեն դպրոցում չի աշխատում, բայց այսօր էլ սերունդն կապված է մանկավարժական ու աշակերտական կո-

լեկտիվների հետ, առաջվա նման ուշադիր է ու հոգատար:

Իր խոսքում Տաշիրի քաղաքապետարանի կրթության, մշակույթի և առողջապահության բաժնի պետ Կնյաց Սարգսյանն անդրադարձավ Կարապետյան գերդաստանի անցած ուղղությունը՝ շեշտելով, որ աշխատասիրությունը, նպատակավագությունը, պատասխանատվությունը գործի նկատմամբ ու հասարակական ակտիվությունը ժառանգաբար սերնդեսերունդ են անցում:

- Յարգելի ընկեր Կարապետյան, - իր ելույթում ընդգծեց նա, - Զեր հայրը՝ Ստեփան Կարապետյանը, ճանաչված ու հարգված բրիգադավար է եղել գյուղում, երկու անգամ ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր և այսօր Յայաստանի ազդեցիկ քաղաքական դեմքերից մեկն է: Զեր կրտսեր որդին՝ Սամվել Կարապետյանը, ճանաչված գործարար է, ում անունը ու գործը բնդում են և նախկին ԽՄՀՍ երկրներում, և նրա սահմանաթիրությունը դուրս: Աշխատելու և արարելու, մարդկանց նեցուկ լինելու ծառումը Զեր գերդաստանում փոխանցվում է և շարունակվում սերոնից սերունդ:

Տաշիրի համայնքների միության անունից նա Սարգիս Կարապետյանին հանձնեց շնորհակալագիր և հուշանվեր:

ՀՀ Վարչապետի խորհրդական, ՀՀ կառավարության սոցիալական հարցերի կոորդինատոր Արամ Կարապետյանն իր խոսքում կարևորեց այն մեծ դերը, որ համայնքի կյանքում ունեն Ս. Կարապետյանի նաև հարգված մարդիկ: Ընթերցելով ՀՀ Վարչապետի որոշումը Ս. Կարապետյանի ՀՀ Վարչապետի հուշանեղայուղ պարզաբարելու մասին, նա ընդգծեց, որ այս պարզակատրումը հանրապետությունում թվով 10-րդն է և վոյալ հուշանեղայուղ պարզաբարվում են հատկապես մեծ վաստակի համար: Դուշամեղայալ հետ նա Սարգիս Կարապետյանին փոխանցեց նաև վարչապետ Անդրանիկ Մարգարյանի բարենադրանքները:

Ծնորհավորական իր խոսքում բազմավաստակ մանկավարժ, Տաշիրի քաղաքապետարանի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գրիշա Բաղդասարյանն ասաց.

- Կարապետյան գերդաստանի իր ողջ գործունեությամբ ծառայում է մեր ժողովրդին: Եթե Տաշիրում և Լեռնահովիտում մեծածավալ բարեկարգման ու վերանորոգման աշխատանքներ են ընթանում, ուրեմն դա կատարվում է Կարապետյանների ընտանիքի միջնուներով, այդ աշխատանքները շարունակական են ու տարեց-տարի դառնալու են ավելի ընդգրկուն:

Ներկաների բուռն ծափահարությունների ներքո ամբիոն բարձրացած Սարգիս Կարապետյանը շատ հուզված ու զգացված խոսեց այն մասին, որ դահլիճում ներկա է իր, ու ոչ միայն իր, այլև շատ-շատերի ուսուցիչ Անլիկոս Դայրապետյանը, մարդ, որի դերը մեծ է իր և հաջորդ սերունդների կրթության ու դաստիարակության գործում: Ելույթի վերջում նա շնորհակալություն հայտնեց ՀՀ կառավարությանը ու ՀՀ Վարչապետին իր աշխատանքի բարձր գնահատականի համար:

Յանդիսավոր նիստի ավարտին իրենց նախկին, բայց միշտ սիրելի ու անբաժան ուսուցչին ու տնօրենին համերգային ողջուն նվիրեցին դպրոցի աշակերտները:

**Աղասի ՅՈՎՐԱՍՆԻՍՅԱՆ
Տաշիր - Կալուգա, «Գործարարին»**

հիացմունք: Դակուրյա՞նը ... Վովա՞ն - Օ-, օօ, նա ... Արոնյա՞ն ... Օ-, օօ, նա ... Կարե՞նը, Արտաշե՞սը, Գաբրիե՞լը ... (Սասան խենքը ուրկե՞ծ ծլավ մեր մեջ): Առանց կեղծավորության, առանց կեցվածքի հավատ ընկերների նկատմամբ, բարյացականություն և հապատություն: Ես էլ եմ միանում ու հպարտանում եղ տղաներով, նաև Արշակ Պետրոսյանով, տղաներ, որոնց մասին դեռ շատ են խոսելու ու գրելու աշխարհում, մարդիկ, որոնք աննահացրին իրենց անունները մեր պատմության ուսկյա էջուում: ԿեՑՑԵՔ Ք-

Սոս ՍԱՐԳՍՅԱՆ

Գուսան Զաքարյան իր անսամբլի հետ



Գուսան Զաքարյանն իր անսամբլի հետ



Գուսանի գերդաստանը

Գուսան կրչում է որոշումով չի տրվում նարդուն: Սա կրչում է, որ ժողովուրդն է մկրտում և շնորհում նարդուն: Եվ նարդը դառնում է ժամանակի որդեգիրը, մարդը դառնում է գուսան:

Դին է արվեստը գուսանական: Այն զայիս է վաղնջական ժամանակներից: Քայ ստեղծագործական հանճարն առանձնահատուկ ցայտունությամբ է դրսլորվել այդ ասպարեզում ստեղծելով գուսանական արվեստի ճշճարիտ գոհարներ:

Գուսանական ասպարեզ մտնող յուրաքանչյուր անհատ պետք է դիմանա ժամանակի դատին: Դիմացողներից մեկն էլ լուսնի գուսան **Սարգիս Զաքարյանն էր:**

Վաղ հասակից երևակվել են պատանի Սարգիս սերն ու ստեղծագործական կարողությունները բառ ու բանի, աշուղական երգ ու երաժշտության նկատմանը:

Մեր ժողովուրդն իր սերն ու ապրումներն արտահայտել է նաև գուսան Զաքարյանի հմայիչ երգերով:

Զաքարյանի արվեստի արմատները խիստ հայկական են: Նա էլ մեծ գուսանների նման բանաստեղի է, երգեր է հորինել ու երգել: Երգել է խիստ ու տրտոնություն, ժայիտ ու բերկանք, սեր ու կարոտ՝ դառնալով բոլորինը, համամարդկային, վեհ ու քնքուշ:

Գուսանի երգացանկն իր մեջ բնություն ու մարդ է ընդգրկում: Լորին ծնողն է Զաքարյանի, Զաքարյանը՝ երգիչը Լոռու: Լորին գուսանի համար առաջին ու անդաման գովերգումն անսպառ աղբյուր: Լորին Զաքարյանի համար ոչ միայն սեր էր, այլ սիրո չափամիշ, ապրումի ու զգացումի սահման: Իր լեռների ու ծորերի, նրա՝ մարդու նկատմամբ տածած անսահման սերն ու կարոտը վեր է աճում ընդհանուր սիրո՝ առ մարդն ու երկիրը:

Տանամյակներ գուսանն իր արվեստով մեր ժողովրդի սիրո, ապրումի ու զգացմունքների ամենօրյա թարգմանն էր:

Այսօր էլ, թեև սակավ, բայց կարոտի ու զգացմունքների բուրն ապրումի պահին հնչում են նրա երգերը:

Ինչ էլ երգել է գուսանը, դրանք չկրկնվող, յուրահատուկ հնայք ունեցող ազգային անզուգական զանձեր, գուսանական մնայուն արժեքներ են:

Արվեստի, մշակույթի մարդը մահվան թիվ չունի, նա միայն ծննդյան թիվ ունի և շարունակվում է անվերջ:

Չկա գուսանը: Բայց կան ու կմնան նրա ինքնատիպ, սքանչելի երգերը՝ որպես հոգու կարոտ, որպես հույսի ու հաղթանակի պատվար:

ԶՔՆԱՊ ԼՈՌԻ

Հազար ու մի պարտեզ մտա, Սիրակ, շուշան, վարդ չուսա, Բայց քո գրկում չընաց Լորի, Եղիշիկի պես սիրուն տեսա:

Սիրուն տեսա ու տարվեցի, Սիրուս խնդաց, արտասպեցի, Անզուգական իմ լեռների Ծոցում սմված մարալ տեսա:

Չընաց Լորի, շատ սիրուն ես, Զներ է, բայց դու օպուն ես, Անզուգական, դրախտային, Եղենական մի պարտեզ ես:

Լոռվա լեռներ, հպարտացե՛ք, Այս համդեսին պար բռնեցեք, Զաքարյանի սիրող սրտի Երգը երգեք, ուրախացեք:

ՂԱՐԱԲԱԴ

Քո եղայր Լոռուց բարեւներ ունես, Զան իմ Ղարաբադ, հնչքան սիրուն ես, Աննան Լոռվա սիրունների պես Զան իմ Ղարաբադ, բյուր հազար ունեմ:

Եղա դաշտերում քո լայնատարած, Ուր հնում նույնիսկ կանաչ չէր բռնած, իսկ այժմ սպիտակ ուսկով են պատած, Սիրուն Ղարաբադ, բուրաստան տեսա:

Զան իմ Ղարաբադ, քեզ բարով տեսա, Ղեր վաղուց սրտին փափազը առա, Շողդ ու ջուրդ ինձ հարազատ են Չընաց Ղարաբադ, քեզ դրախտ տեսա:

Քո երկնալազաց լեռներով անցա, Անենուր խինդ ու եռուզեն տեսա, Խիզզախ բալեքիդ քրտնացան ու ժիր, Զան իմ Ղարաբադ, քեզ արժան տեսա:

Զաքարյանս, քեզ երգել են ուզում, Կարոտս առնել, գնալ են ու ուզում, Քո զալիք վաղը պայցառ են ուզում, Զան իմ Ղարաբադ, քեզ ծաղկած տեսա:

ԽԱԲԱՐԻԴ ՄԵՌՆԵՄ

Չարինդադ լեռան զով քամիներից, Չասկերը մերմիկ շորոր են գալիս, Ասես խարար են բերում իմ յարից, Չանգիստ քուն անուշ իմ սև աչքերից:

Խաբարիդ մերնեմ, յար բոյիդ մերնեմ, Սոր ազիզ բալա, մուրազիդ մերնեմ:

Այդ ավետաբեր լուրը իմ հոգում Յար քո կարոտն է նորից արթնացնում, Նոր փառի տանում կոլխոզ դաշտերում, Շնձում են առատ հաց տալու երկրիս:

Խաբարիդ մերնեմ, յար բոյիդ մերնեմ, Սոր ազիզ բալա, մուրազիդ մերնեմ:

Օդի եմ քաշում մեր կարմիր հոնից, Թարմ պանիր ու յուղ մեր Մարալ կովից, Քեզ են ուղարկում նվեր քո յարից, Աչալուր եղիր սահմանում, հոգիս:

Խաբարիդ մերնեմ, յար բոյիդ մերնեմ, Սոր ազիզ բալա, մուրազիդ մերնեմ:

Սայր Յայաստանը դրախտ է դարձել, Աննան Լորին շատ գեղեցկացել, Մեր Զաքարյանը գուսան է դարձել, Քեզ փառը է երգում զօր գիշեր, հոգիս:

Խաբարիդ մերնեմ, յար բոյիդ մերնեմ, Սոր ազիզ բալա, մուրազիդ մերնեմ:

ՍԻՐՏՍ ԼՈՌԻՄ Է

Իմ գոյատևման այս թոհ ու բոհում Այսքան ապրումներ ես չեմ ունեցել, Ես ու իմ սիրուղ անհար ճանփեքում Սիրախ խաղաղ, անփոր ենք անցել:

Ես շատ բան կյանքում ճիշտ եմ գուշակել, Բայց այս մեկ հարցում սիրուս լոռուն է, Ես սիրո գործում այսպես չեմ գերվել, Ու այսպես տանջվել, սիրոս մխում է:

Եզր պատրաստեց Ալոն ԽԱՎԱՐԵՎԱԸ

«Գործարար» ամսագիր աշխատակազմն իր խորին շնորհակալություն է հայուսում գուսանի եղբար աղջկան Նախարար Զաքարյանին, անհրաժեշտ նյութ արամագրելու համար:

ՏԱԽՈՒԼ ՏՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔ

«...*ցեղի պականքը*...»:

Q. ՆԺԴԻՒԹ

Հայաստանի Հանրապետության ամենաառաջին դեմքերը կարող են չցնցվել այս անգամ խոսքը քառակուսի կիլոմետրով չափվող երկիր մասին չեն. այստեղ այդ մասին կարելի է ընդամենը արձանագրել, այն էլ միայն հերթական Ալեքսանդրապոլ ստորագրելու պահից, մինչ այդ հանր համար են, ինչպես ոչինչ։ Կա ևս մի Հայրենիք, որ ավելի խորն է ու վսեմ, որ եւթյունն է, որ պարզապես Մարդ է կոչվում։ Այդ Հայրենիքը տաճուկ է տրված գալարային օրինականին։

Արցախյան շարժման ու Երկար տևած ռազմական բախման ժամանակ Երևանում մարդիկ դեռևս Մարդ էին, որ երբեք մտքերով չէին անցկացնի այգիներում սեփական տներ սարքել, երկրաշարժ տեսած Երկրում անճոռնի ու խախուտ կցակառոյցներով արած շարժվել, նոյնանհիշ թվերով մերենաներո քշել կայծակնային արագուրութենաներով պարագաներով՝ արհամարիելով պարկեցտության պատճառով այդ հնարավորությունից գործկ քաղաքացիների նոյնիկ գոյության իրավունքը, ափսոսալ հանուն Արցախի արած իրենց գոհողությունների համար, սրբազն դահլիճներում տեսնել «համերգների» ելած կենդանանմանների: Հարունակություններ, կամ որ ույնն է սկիզբը, կարելի է տեսնել կարդալով խորենացու «Հայոց պատմության» մեջնամասը:

Հիմա Երևանից, առնվազն նրա կենտրոնական հատվածներից, անհետացել են նրանք, ովքեր Շարժման տարիներին հեռուստացոյցով լսած մի անարդար բարի պատճառով խնդրվում էին հեռուստատեսության, կառավարության, խորհրդարանի շենքերի աջակ, ովքեր ոչ թե կիլոգրամանոց ոսկե շղթաներ էին կորում պարանոցներին ու թաթերին, այլ տարիներու կուտական իրենց խնայողություններին էին ուղղորդում Արցախը ու Երկրաշարժի գոտի, ովքեր բազմահազարանոց ցույցերում չէին հայիուսն ու չէին կարող պատերացնել, որ երբեք իրենց քաղաքի կենտրոնն ու խորհրդարանը լցվելու են վաղ քառեղարի Կերպարանքներով, ովքեր ոչ միայն չէին անցնի կարմիր լուսի տակից, այլև իրենց մերժներով և անձար տեղյանիցում էին մարդկանց, ովքեր անդգում էին ուսուցչն ու առանց արժանիքի երազում անգամ հրենց չէին երևակայի համապարանի, ճարտարագիտականի կամ մեկ այլ բոլիկի հարցեր տնօրինողների ստվերում նույնիսկ, ովքեր տղամարդկություն էին համարում ոչ թե գավառական հիյուրտանքը, այլ տարեցին, կնօշը, մանկանը զիտելն ու կիրա մարդկանց ջղազառում ինքնատիրապետում ունենալը, ովքեր անափ գորովանքով ընդունեցին Սույնագիրից ու Բաքվից մազապաւրծ իրենց քոյլ-եղբայրներին ու այսօր ապած են հենց իրենց Երկրորդ սորտի ընդունինի կարգավիճակից:

Այսպես Երևանի ավանդույթներ ձևավորած մասերից արտասահմաններ ու ծայ-

ռաճասեր են քշվել նրա իսկական տերող, ինչպես ժամանակին անհետացել ու գրողի ծոցն են անցել Բաբելոնի, Կոստանդնուպոլիսի... տերերը՝ տարածքը դարձնելով՝ «կապիկների նույրավ»։ Մեր նույրաք է բարագավաճում է՝ Ոպերայի շուրջ բուսած այլանդակուրյուններով, քաղաքի՝ Աղյամի շուկա դարձած հարաբերություններով, հաստավիզ ու սահիրագույն պետական պաշտոնյաներով, ովքեր քաղաքեղի նման սորոսվել են ամենուր:

Ոչ մեկի մտքով տասը տարի առաջ չէր անցնի, թե կարելի է մանկավարժին առանց հետին մտքի, միանգամայն բարի ու անկեղծորեն ասել. «Վաճառիր ինձ ավտոտնակո, չէ՞ որ դու մանկավարժ ես»: Այս ի՞նչ են արել խեղճ մարդու հետ. Երան այլ ուսուցիչ պետք չէ: Եվ անբարոյականություն է ամենը բարդութիւն ի միայն ժողովութիւնը ստորև բնագրների վրա: Այդ ուղյուն մարդոն ընդամենը տասը տարի առաջ գիտակցում էր, որ հենց մանկավարժը, ինժեները, բժիշկը մտավորականն է առաջին հերթին աղժանի բարեկեցիկ լինելու, երազում էր, որ իր զավակն էլ նրանցից մեկը դառնա:

Թես լվտիներ միշտ է եղել են, սակայն ընդամենը տասը տարի առաջ ոչ մի պաշտոնյա կամ հանկարծահաս մեծահառուստ իրեն քույլ չեր տա չարգելակել անխստիր բոլոր լուսաֆորների կարմիրից տակ, իսկ սանք, 22 և 900 հանարներով BMW ամենանոր ավտոմեքենայի տերեպարզապես չեր քշի քո մեքենայի վրա, ինչ է թե հանդգնել ես ազդանշանել այս աղիքով, որ խաչմերուկի կենտրոնում, թքածունենալով այլ քաղաքացիների, կարծում եմ նաև օրենքի ու այդ օրենքի գերագույն պաշտպան նախագահի ու նրա՝ տղամարդկության մասին պատկերացումների վրա, անհուսորեն երկար գրուցում է այլ մեքենայի մեջ գտնվողների հետ: (Այս համարը դիտնամբ և ճիշտ ասացի, քանի որ մինչ այս ասվածները պարուն նախագահը, վարչապետը, նախարարներն ու այլ պատահականները անհիմն բրայությախոսություն ու փողոքն կիսամարտեն:)

Ու ինչքան էլ երկրադարձության դրույթով ական դրվեց մեր պետության անկյունաքարի տակ, միևնույն էլ չի լինելու այդ բարուն փայտայվող Ամենայն Հայոց Նախագահը. այդ երկրադարձու անձնագրակիրները գալու, ուտել-խսելու, քրդական տոհմիկ տալու ու գնալու են Ամենայն Հայոցին բռն-ելով իրենց հետևի հավաքելու պատճառուցված Կերպուրների հարսանքասեղանը: Ելի մնացողներն են, որ, աչքը հեռանալու ժամանելիքին, համորութեան են այս սուպերհայրենասեր հիշանավորների գոյությունը, մինչև մի ող ու կ «ապացուցվի», թէ հայոց բարեկված Երևանն էլ, մնացածն էլ «գրավյալ» տարածք են ու անհապաղ պետք է վերաբռնին, ուստամբաններին:

Եվ այստեղ չի օգնի ոչ մի ճամարտակություն, թե Տժդեհն այս ու այն է ասել (դժվար թե Տժդեհն իր Երիվարները Լեռնահայաստանում նախշեր, ասենք, Հ Նշանով ու քեզ խեղճերի վկա կամ Դայաստան մաս-մաս ծախտեր հատկապես ռուսին). Հեն օգնի Վանի, Սուրբալուի, Իգդիրի, Կարսի, Մուշի, Սաստինի..., ամբողջ Էրգի

Եղանակի տեսությունը հեռաւտատեսությամբ հաղորդելու ու այդ անուններով հայրենասիրաբար որկորարաններ աշխատեցնելը, չի օգնի լիբերալ չիմելով լիբերալիզմի անունով երդուելը, չի օգնի պահպանողականությունից հասկանալու համար անհրաժեշտ ուղեղությունից զարգաներ չունենալով պահպանողականությունից խստելու ու իրենցով այն վարկաբեկնելը... չի օգնի ոչիմ: Չի օգնի, որովհետև կեղծիր աղողակը երկինք է հասնում:

Սեր հշանանությունների տղամարդկությունը պատում է բացառապես Հայաստանի չարքաջ ժողովրդի վրա: Հասկանում են, որ պարոնայք նախագահը, Վարչապետն ու բարձրաստիճանները վախենում են իրենց կերպարանքով ծնած իրենց հրեշներից, գիտացում են, որ հենց անց օրը, երբ իրենք հանգնեն որևէ նամատափ խիզախի նկատմամբ օրենք կիրառել, կրավի իրենց զորքայությամբ զավթած հշանալույրունը և կիշողութեն իրենց հսկ զավակների կողմից: Հասկանում են ու դրանից եկող իրենց անզորության կատարությունը բափում մեզ վրա: Լավ, ասենք թե բոլոր ոչ իշխանահած թերերն ու հեռուստապահները քավեցին, խաչատրյան ու Բարքահանան տեսած դայիճներուն հնչեցին Կիրովարադի ավտոկայանների երածշուրթյունը, բոլոր նստավրականներին (խսոքը ծախու գավառամիտների մասին չէ) քշեցին արտասահմաններ ու ծայրամասեր սուզելով աղքատության մեջ, չքողեցին անգամ քայլել մեր փողոցներում, երկրից հեռանալ չկարողացողներին էլ վերջանականապես վարժեցրին կաշառ տալ-առնելուն, բա հետով: Մի թե ափսոս չէ Մարդ տեսակը, որ ծրագրված վերացվում է: Հսկ եթ համկարծ նորից Մարդ ապետ եղավ, ոչ թե տասք տարի հետևանականորեն կերտվող ստրուկը: Ցայսօր չեն հասկացել դրանք, որ հայսատանցուն հրեշի կերպարանքով մատուցվող Վրևուստը մեզնից այլ բան չի ակնկալում, չի պահանջում, չի խնդրում, այլ միայն Մարդկանց երկիր. գոնե հանուն Ղարաբաղի չսապանեն Մարդ տեսակը: Մեր ապետության առաջնին դեմքերն այլ առածլություն չեն գգում իրենց մեջ, այլ արժանիք չունեն, քան սովորական քաղաքացուն նվաստացնելը. և դա է իրենց միակ երջանկությունն ու ի հնքնահաստատումն, միշտիրանքն ու տղամարդկության ցուցիչը:

Քրիերն ու Քուրքական ցեղերը մեր Երի-
րում արմատակալեցին ու մեր պապենա-
կան տարածքները միջազգային փաստա-
թղթերում այսօր անվանվում են «գրավ-
յալ» այն պահեց, երբ այն ժամանակվա շի-
պապուն արհամարդեց Մարդուն ու իր
նմանակ Երիկարը քշեց Վրան, արհամար-
դեց ու մելիքական օքարերկաների ժա-
մանակ «պատահական» կրակոցով սպա-
նեց նաև սովորական անցորդին Մար-
դուն: Այդ պահից Մարդիկ գյուղերով,
ավաններով, քաղաքներով հուեցին Թիֆ-
լիս, Բաքու, հեռավոր Լեհաստան և ամե-
նուր, ուր չկա իր միջի Սարդուն սպանու-
տականքը, իսկ դատարկ տարածքը լցվեց
օտարով՝ իրեն ծառա և հումք դարձնելով
զորքայությունը միայն սեփական ժողո-
վորի գիտին բափեյու ունակ՝ սարերից
իջած մի խումբ ջիպավորներին:

ԳՈՅԱՏԵՎՄԱՆ, ՎԵՐԱՊՐՈՒՄԻ ԳԱՂՏՆԻՔԸ


Ամերիկացի գրող Էլգին Գրոսբրուսի «Արարատ» վեպը ԵՊՀ անգլերեն լեզվի դասախոս Սվետլանա Թումանյանը թարգմանել է 1988 թվականին, սակայն հրատարակել է միայն անյօն տարի (մեհական միջոցներով)՝ քայլ մեծ եղեռնի 90-րդ տարեկանից օրերին՝ այդ կերպ ոգեխոչելով ու խնկարկելով միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակը:

Ե. Գրուզը լուսաբանութեան մասին պատճենագիրը կատարվել է 1920-ական թթ. աշխատել է Կովկասում, մասնակցել փախստական մերին ցույց տրվող օգնությանը: Նրա «Արարատ» վեպը լույս է տեսել 1939 թ., շահել երկու մրցանակ: Այն հայկական մի փոքրիկ հանաճարի պատմությունն է 1895-1920 թվականներին: Վեպում գրողը փորձել է հասկանայի թշնամական ուժերով շրջապատկած, ճնշված, ասկայն ոգին պահպանած հիմնավորությունը ազգի գոյատևման և Վերապրումի գաղտնիքը: Ինչո՞ւ են որոյ ազգեր պատմության հոլովույթում վերանում, իսկ որոյ ազգեր՝ վերապրում: Արեդշվածի գաղտնիքը բանալու նպատակով ընտրել է հայ ժողովրդի կյանքի մի որոշակի հասոված շուրջ 25 տարի: Ըստ թարգմանչուի Ս. Թունայանի, հեղինակը այդ շրջանը նիշակյուտելով աշխարհում կատարվող մեծ ու փոքր իրադարձություններին, ստեղծել է մի զարմանահրաշ պատում մարդ արարած գագանարարո Վայրագությունների, անգութ ո իրեշավոր սպանիք, մարդու փառախիլության, նաքառումների, հուսահատությունների, հաւափի և Կատօնի ապավինությունների մասին, պատում, որի բոլոր թելերն անտեսանելիորեն տանում են դեպի Արարատ լեռը հեղինակին հուզող հարցի ապահովանի բանային:

Ըստեղունքի պիտի դժվարանուն են հավատալ, որ հեղինակը հայ է. այնպիսի անկեղծությամբ ու սրտացավությամբ են նկարագրվում, ներկայացվում իրադարձությունները ու տպավորությունները: Անշուշտ, երկի հոլովանությունը, ջերմությունը ու անճօշականությունը պայմանագրված են նաև թարգմանչությունում:

Փոքրիկ հայկական համայնք՝ հալածված, հյուծված, սովահար, չնայած աննկարողութելի տառապանքներին, ամերիկացի միսիոներ Ամովս Լայզը ջանքերով փրկվում է հրաշքով: Կեպում շարադրվում են եղելություններ թուրքերի հայ ժողովրդին, որպես էրիկ ամբողջականություն, կանխանական ազգակած բանջնջելու, ոռուների իրենց ազգային շահերից ենթակա հայության «ազգատագրելու», ոռուսական հեղափոխության բարբարոսական ավերածությունների, և ամենաէականը՝ այդ դժոխքից աստվածապաշտ հայկական համայնքի փրկության մասին:

Մարդկային մեծ ու անկեղծ ցավ կա Ելգին Գրուբը ուսի բոլոր նկարագրություններուն. «Պատի տակ հազարից ավելի հայեր էին կանգնած: Զինվորների թիվը հարյուր հիսունից չէր անցնում: Եթե հայերը որոշեին դիմադրել, շատերը կվարողանային փախել: Խիզախությունը չէր, որ պակասում էր նրանց: Դարեր շարունակ սուրանի ընանիք քրողակունը ենիշերիները, հավաքագրվում էին հայերից... Տպակությունն այնպիսին էր, որ նրանք մտադիր չէին դիմադրել... Ուզմական դատարանի վճիռն ի կատար ածելուց հետո, մեռածներին թողեցին այնտեղ, որտեղ ոնկել



ԵՒՆ: Գիշերն իշավ: Զինվորներին ազատ արձակեցին, որպեսզի սրանք մասնակցեն հյալական թաղանասի թալանին ու բռնաբարությանը, որի համար սպանդն ազդանշան էր... Դոները ջարդվեցին, տղամարդիկ սպանվեցին, կանայք անճարություն պատակներով գետնին տապալվեցին ու թաշօշվեցին: Այդ առավոտ կենդանի հյերի համարյա կեսը, մինչև արկը նորից կծագեր, սպանվեց»:

Հեղինակն ամերիկացի միսիոների շուրթերով Ներկայացնում է իր ժողովորի կարծիքը հայության նաևն. «Նրանք կարող են տիրապետել յուրաքանչյուր մասնագիտության, եթե հնարավորություն տրվի: Միուն
են իրենց տունը, եթեխաներին, իսկ ամենից
շատ՝ իրենց Աստծոն: Ազնվաբարոյւթյան
և ընտանեկան առաջնությունների հար-
ցում քաջակի են: Դիմացկուն մարդիկ են,
սովորաբար միջահասակ ու ամրակազմ, դի-
մագթերի և կառուցվածքի բոլոր տեսակնե-
րին կարելի է հաճիղաբեր նրանց մեջ, քանզի
նրանք սենական և արհական ցեղերի հաս-
նուր են: ...Արտիստիկ են, աշխատաեր,
շատ խորամիտ, քայլ հիմնականում պատ

շատ լուսավոր, այս դեպքում առաջ գալիք է առաջանակ պահպան մարդիկ են: Բարեհողի են, հաճախ ներկայացնող ու զայտուն: Մաքրու մարդիկ են և հավատում են լավ գործին: Սիրում են արդարություն և ծշնարտություն, ենթարկվում են օրինական իշխանությանը»: Ամերիկացի միսիոներին հաճախ է մտատանջում ի՞նչն է, որ հայ ժողովրդին պահել է որպես ազգ՝ միասնությունն ու հանախմբվածությունը, որ տվել է նրանց հավատոր, նրա հենադարյան եկեղեցին՝ իր մշակված ծխակատարություններով և խիստ կազմակերպված հոգևորականությամբ, մշակույթը, հայկական ոգին, ընտանիքին նրանց նվիրվածությունը:

Առաջին հետաքրքրական է վեպի այն դրվագը, երբ Լայզը համոզում է հայ մարդուն՝ չհատել օվկիանոսը. «Ամերիկան մեծ երկիր է, հնարավորությունների երկիր: Բայց Աստված այս երկիր վրա է քայլել: Սա՞ է եղել նրա այգին հնուց ի վեր, և այս սիրում է սա: Մի օր այն կանգնելու է հենց այնպես, ինչպես նա է ցանկանում»:

Արարատ լեռը միսինների համար Աստծոն նպաստակի հողելեն ապացույցն է: Լեռ, որի մոտ ապրելով, հնարավիր չէ զգալ Տիրոց իրական Ներկայությունն ու Աստվածային հավերժական խոստումը: Ըստ

ნორა ითვალისწინებული გადასახატის შემთხვევაში კი მათ დაუდინოს მართვის უზრუნველყოფა.

Գրքում ներկայացվում են նաև Բարվում տիրող հակահայկական՝ հայատյա տրամադրությունները: Ուշագրավ է հեղինակի կարծիքը աղբբեջանցների մասին: «Աղբբեջանի բնակիչները թաքարներ էին, որոնք այս հորոց գրադացնուն էին երևի յոթ հարյուր տարի: Այստեղ նրանք հաստատվել էին Կենտրոնական Ասխայից մեծ աղթի ժամանակ, Թամանդրամի և Չինգփա խանի օրերում: Ավանդաբար նրանք անասնապահ քոչվող ցեղեր էին, քայլ տարածքի աղոյունաբերականացման հետ մեկտեղ, տնտեսական զնշման հետևանքով կամաց-կամաց ստիպված էին օրավարձու բանվոր դառնալ բենակիրներ, մանր արհեստավորներ և նավթահանքի աշխատողներ»:

Թուրք բարձրաստիճան երիտասարդ սպա Ղաջիմ Ֆարուք թիյն իր ցեղին յուրահատով ամբարտավանությամբ համոզված է, որ Թուրքիան բռնըրելի հանար է, որ փոքրամասնություններու արգելել են ազգային միասնության ճանապարհին. «Սեզ թուրք ազգին, որից ավելի առնական ու ռազմատենչը չկա, այսօր անվանում են «Եվրոպայի հիվանդ»: Եվ դրա պատճառն այն է, որ անցյալում սիրալիր ու բարեհաճ վերաբերնունը ենք ցույց տվել այս պնակալեզ, պարզունակ, բյուզանդացիների մնացորդ, հյուծված ու վարկարենկված ժողովութիւն: Նրանք պիտի ոչչենան... Ասուն են հայ ցեղը: Ունախայ կայսրությունում երեք խաղաղություն չի լինի, քանի դեռ մի եղակի հայ կենդանի է: Թեև չի բացնում նաև իր դրական վերաբերնունքը հայերի նկատմամբ. «Հայեր գերազանց հատկություններ ունեն: Նրանք շատ խելամիտ են և խորաթափանց, ազնիվ են ու օրինապահ... Բայց քանի որ մի օր որոշ թուրքանական ազգերը միանալու են Կենտրոնական Ասիայի տափաստաններից մինչև Բուֆոր, և ունենալու ենք պահիչամիջն, դրա համար այդ ազգը պետք է վերանա, որպիտես գտնվիւմ է Թուրքիայի և Աղրբե-ջանի միջև»:

Ամենասպասարքությունը ու տագմապահարույցը գրում այն տեսարանն է, երբ դժիխային ու զրկանքներով լի օրեր ապրած թափառական փոքրիկ համայնքը, համայնք՝ «հաստատված ոչնչի վրա, հանդգնորեն կյանքի կառչած, ձնառն և ստվաճահության դեմ դաժան ճակատանարտից հարդարանակով ողուր եկած», հանկարծ տեղեկանում է, որ Թուրքերը, դրժեւու Սկրի հասլարդության պայմանագիրը, հիսուն հազարանոց քանակով արշավում են Ղարսի ուղղությամբ, որտեղ Կ իրենց ժամանակավոր կացարանն է: Աննկարագրելի է խուճապն ու անելանելի իրավիճակը համայնքում, ուր հաստուենան անզեն տղամարդիկ են, կանայք և շուրջ 4000 Երեխա, որոնց մի մասը՝ որը, մի մասը՝ նորածին, և նրանց փրկության միակ հույսն ու ապավենոր Աստված է ու Անձնվա Լայզը... Եվ կատարվում է փոքրաթիվ, անպաշտապն համայնքի փրկության հրաշքը... Կրաքսու դեպի Կրաքսա փախուստի ժամանակ և ոչ մի Երեխա չի կործանվում, չի կրցում. «Ակրապատն իր ապաստանն է առաջարկում մարդկանց, իսկ կամակոր Կրաքսն այդ ապաստանն ապահով է դարձնում»:

«Վեայի հերոսները, ովքեր աշխարհի արհավիրքներից կախչում ու ծվարում են Արա-

πωατήσεις η ήτερη μή ψηφοφρήκε φορτιζουμένη, λεγόμενη ρωμαϊκή πανίδα, σε αυτήν την περιοχή της Αριάδνης, οπότε και η ονομασία της περιοχής Αριάδνη.

առաջարանում գրում է Վեպի բարզմանցուի կ. Մթումանյանը և Զշում, որ թեև ամերիկացի գրողի վեպում դեպքերի ժանանակագրությունը և վայրերի աշխարհագրությունը երեմն չեն համապատասխանում իրականությանը, այն բարձրարժեք երկ է, և հարկ է խո-

Նարիկելու ու Երախտապարտ լինել ամերիկացի մեծ նարդասերին՝ նրա անգնահատելի աշխատանքի հանար:

ՀԱՍԱՆ ՎԱՍԻՔԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՄ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԸ

**Հայերի տեղահանության մասին նրա հուշերի իրատարակումը
լուրջ հարված է բուրքական ժխտողականությանը**

Որբան ծավալվում է Կայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Թուրքիայի պաշտոնական շրջանակներն այնքան ամուր են կառչում ժխտողականությունից և հարցը վիճարկման ոլորտ ներքաշելու համար անընդմեջ կրկնում են համատեղ հանձնաժողով ստեղծելու, արդիվիճերը փոխադարձարար բացելու պետական առաջարկները: Նորանց խնդիրը, ինչ խոսք, արդիվիճերը չեն, ոչ է հարցի ուսումնասիրության անհրաժեշտությունը, այլ Ցեղասպանության ճանաչման գործընթացի կասեցումն է ու հարցի նկատմամբ բոլորական հասարակությունում առաջացած հետաքրքրությունների սահմանափակումը:

Ակնհայտ է, որ մշտապես վերարձարձնան պայմաններում Յեղասպանության հարցը մնում է երկրի օրակարգում, իսկ դա նախադրյամբ է ստեղծում, որ վերահմաստավորվեն դեմքերի ժամանակակից թուրք պետական գործիչների այս աշխատառությունները, որոնցուց հետինականները հպարտությամբ են արձանագրում իրենց նամանակցությունը հայերի բնաջնջմանը կամ կատապարտելու համար «իթթիհադ վե Թերաքիմ», վկայում են բնաջնջման փաստերի նասին:

Այս գործիքների մեջ թերևս առանձնակի տեղ ունի Յասան Վասֆին, որը կովկասյան ծագման պատճառով հասարակությանը հայտնի է եղել «Ձերքեզ Յասան» մականունով։ Իրթիհաղական ընդդիմադիր Ծամբառում հայտնված այս գործիքն Ձենալ փաշան 1914 թ., որպես քարտուղար նախա աշխատանքի է տեղափորել ի օգլահարութ ծովալյին նախարարությունում, ապա կանչել է Արդիա և Նշանակել «հայ տեղահանվածների տեսուչ»։ Առաջին Յամաշխարհային պատրազմի ավարտին Յասան Վասֆին վերադարձել է Ստամբուլ։ 1919 թ. նա, իրապարակելով հայերի տեղահանության մասին իր հուշերու և նամակները «Աւեմար» օրաթերթուն, որից ֆրանսերեն թարգմանությամբ արտաստեղի է «Ունեսանան» թերթը, սկսել է մերկացնել իրթիհաղականների հայացինց քաղաքականությունը։

Հնայած «Իրենիկա վե Թերաքրիի» հետ սուր հակասություններին, թենալական-ները «Ալեմդարի» էցերում «բուրքերի դեմ հայերի օգտին» հողվածների շարք գրելու համար սպառնացել են ոչնչացնել Հասան Վասֆիին: Թեև Վերջինս հրարապել է հուշերի հետագա շարադրությունից, սակայն խոսափելու համար թենալականների հաշվեհարդարից նախ փախել է Հունաստան, որտեղից է ստիպված անցել Բուրարիա:

20-ական թթ. Վեհիջին Վերադարձնալով Ստամբուլ, Յասան Կասֆին հրատարակել է մի շարք աշխատություններ իթրիհաղպական ների հանցավոր գործունեության մասին:



Ղրանց մեջ Յայոց ցեղասպանության լուսաբանման տեսակետից կալորեազույնը նորա «Տեղահանություն և ոչնչացում. հայերի տեղահանության հրականությունը» վերնագրով 1915 թ. «Ալեմնարում» լույս տեսած նամակն ու անավարտ հուշերմ են:

Նամակում հեղինակը պահանջում է հյերի «տեղահանության» պետական որոշումը հայտարարել «հայ ժողովրդի ոչնչացնան» որոշում, ընդգում է, որ դա «ընդունել է իրիհադ վե թերաքի հրոսակախումբը», երևան է հանում տեղահանությունը «ռազմական անհրաժեշտությանը» պայմանավորելու սնանկությունը և հարցնում, թե «ի՞նչ հրավունակություն կ կառավարությունը բռնափականում իր հպատակությանը տակ գտնվող որոշ անձի տանը, ընտանիքին, ունեցվածքին և դրամին», ավելացնելով. «Եթե կան մարդիկ, որոնք պաշտպանել են հայերին տեղահանությունից, ոչնչացնելոց և կոտորածից, նրանց գործելակերպն ու գործողությունները, ենուն էն անձնական իշխակությունից, նպրասիրությունից և խոնճից»:

Ինչ վերաբերում է Յասան Վասիլի ցեղասպանության վկայության բնույթը կրող հոլցերին, ապա Ձենալ փաշայի հետ նրա անձնական մտերմությունն ու Սիրիայում վարած «հայ տեղահանվածների տեսուչի» պաշտոնը ու նրա միջնա հիմնավորութ են դրանք, այլև պաշտոնական բնույթը են հաղորդում հիմնավորումներին։ Այս ամենին մենք ծանոթանում ենք շնորհիկ ՀՅ արտօնության հարիրական, պատճական գիտության խորհրդական, պատճական գիտության խորհրդական, պատճական գիտության

թյունների դրկտոր Արսեն Ավագյանի «Հասան Ամջա» Շատ լավ հարցուի հազարավոր հայերին ՞վ սպանեց: Տեղահանություն և ոչնչացում» աշխատության, որը 2006 թ. Երևանում հրատարակել է ՀՀ ԳԱԱ Հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտը, խմբագրությամբ Լ. Ա. Բարսեղյանի:

60 էջանոց այս գրքում բացի հայերի տեղահանության մասին՝ Հասան Վասիլի Շահնակից ու հուշերից, զետեղված են նաև Ահմեդ Քարդիի «Դահման Նախարարի մասին», «Տիրան Ջելլելյան Էֆենդիի բոլորումը», «Չղորայ և Կարդիս Էֆենդիները Ղարբեքիրի ծանապարհին» վերնագրերով 1918-1919 թ. նույնական Աւեմդարում հրապարակված վկայությունները: Բնագրից բարգմանամաժ այս օյլութերը աշխատության հետինակ Ա. Ավագյանը հագեցրել է բովանդակալից Աւրածականով և արժեքավոր ծանոթագրերով, որոնք հայ մասնագետներին հստակ պատկերացում են տալիս, որ Հայոց ցեղասպանության համար աշատունական հատակող դեպքերի ժամանակակից թուրք պետական գործիչների խոստապնությունները չեն սահմանափակվում Հասան Վասիլի Վեռոհիշյալ հուշերով:

Հետևաբար, Յասան Վասիփի նամակի և հուշերի հայերեն հրատարակումը կարևոր է Յայոց ցեղասպանության միջազգային ճանաչման առօնությունը, որովհետև քուրքական ժխտողականությանը Ցեղասպանության մասնակի թորությունը պետական օրոքիների խստովանություններով հակառակություն հարավդրություն է տալիս մեր մասնագետներին։ Այլ դեպքում արդեն վիճարկման ոլորտ կներքաշվի ոչ թե Յայոց ցեղասպանությունը, այլ ցեղասպանության ժխտողականությունը։ Քանի որ ժխտողականության վիճարկումը չի կարող ընդունելի լինել Թուրքիայի համար, ուստի նա ստիպված կվերանայի Հայաստանին հասցեազրած համատեղ հանձնաժողովը ստեղծելու իր առաջարկը, իսկ որանով անհմաստ կրածնա առաջարկի շահարկումը միջազգային ասպարեզում։

Դակումենտ

ՄԵՂԱԿՐՈՒՄԵՆ

Արդիզնայի համալսարանի պրոֆեսոր, գրող Ելիֆ Չափակին նեղարանք է առաջարկվել թուրքական հիմնածությունների կողմից Թուրք ազգի արժանապատվությունը կիրավորելու համար, համոնում է «United Press International»-ին:

Այսպիսով «United Press International»-ը:
Քրաֆական հետապնդման պատճեն է դարձել Ե. Շաֆակի գիրքը, որում 35-ամյա բրուուիկ անդրադարձությունը է 1915թ. Հայոց ցեղասպանության թեմային, հայորդում է «Arizona Republic»-ը: Համաձայն նոյն արյունիքի, Ծովորիան առաջին ամսագլու է նման մեղադրանք՝ առաջարկում գեղարվեստական ստեղծագործության հնամար: Ի ետք, գրողին սպառնում է 3 տարվա ազատագրում:

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ԶՈՒԳՈՐԾՈՒՄ

Շատերն են սիրում արվեստը, նվիրվում այդ գործին, նկարում են, քանդակում, զբաղվում խեցեգործությամբ կամ գրելենագործությամբ: Բնության աչքը նրանց միջից առանձնացնելով ընտրյալներին՝ կրակ է վառում նրանց սրտերում:

Բայց երեմն հանդիպում են նաև մարդիկ, որոնց նկատմամբ Աստված բարեհաճ է գտնվում՝ օծելով նրանց բազմաշնորհությամբ...

Գնահատելու համար չգիտես ինչու սովորաբար առիթ է պետք: Իսկ նա իր արած գործով ու անցած ճանապարհով ծշմարիտ գնահատականի է արժանի:

Խոսք Գեղագիտության Ազգային Կենտրոնի Վաճառքորի մասնաճյուղի տնօրեն Կարինե Գլոյանի մասին է, որ շեմելով վերացականության սահմանները իր ներքին ապրումներն ու հուզերն առավելագույն ներկայացնում է իր գործերում: Նրա մոլումն այնպիսին է, որ ինչին էլ ծեռք զարկի, միևնույն է, գեղեցիկ և ստացվելու: Ստեղծածն էլ ներշնչանք է ընդգրկում, հավատով համակում մարդկանց:

Հատկանշական է և շատ կարևոր, որ կենտրոնի իր սաների հետ ամենօրյա քրտնաջան աշխատանքը առաջնորդվում է գեղեցիկն ու բարին սովորեցնելու մտահղորդությամբ, և փորձում է իր սաների յուրաքանչյուր օրը դարձնել տոն:

Կարինե Գլոյանը բազմից զարմացրել և ուրախացրել է բոլորին իր յուրօրինակ աշխատանքների ցուցադրությամբ՝ «Թղթեարաններ», «Ձեռագործ և ապլիկացիա», «Ես և իմ սաները», «Տիկիններ»:

Այս անգամ էլ տաղանդաշատ տիկինը բոլորին համար տոն էր կազմակերպել իր նոր անհատական ցուցահանդեսով՝ «Քատիկա» (Գեղանկարչություն մետաքսի վրա): Ներկայացված աշխատանքները՝ արված մետաքսի վրա, խորապես կանացի էին, նորագույն: Նրանցանք էր գեղարվեստական կերպը և գոյների ընտրությունը: Եվ նենք նորից համոզվեցներ, որ Գլոյանի համար նյութերի և տեխնիկական հնարքների բազմազանությունը բերում են նրա երևակայության արտահայտման նոր ու հետաքրքիր ձևերի:

Նրա թերև, գեղեցիկ, գունաշատ գեղանկարչությունը մետաքսի վրա հաճելի տրամադրություն էր ստեղծել: Մեկն պարզ է դառնում, որ այս աշխատանքներում տրոփում է մի մեծ «սիրոտ», հայ կնոջ սիրոտ, որ հիմա հանել ու արևին է փոել իր երազը՝ իր գոյներով:



Ու ականայից մտածում ես, եթե շատ լինեին Գլոյան անհատներ, մենք էլ ավելի շատ հնարավորություն կուտենայինք արվեստի հրաշը աշխարհին առնչվելու, սեփական ծեղքերով ու մտքով վեր հանած արժեքների ականատեսը լինելու:

Այս հայուինու արվեստը ի գորու է ջերմացնելու մարդկանց սրտերը, իր շրայը, տաք գոյսներով ցրելու հոգու թափիծը, խաղաղեցնելու մարդու հոգին, գարուն վառելու բոլորի սրտերում:

Ի գորու է սեփական հոգու մասնիկները կարի առ կարի նվիրաբերելու մարդկանց:

Գեղորգի Թովմասյան - գեղանկարիչ,



ՎՊՄԻ-ի կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր. «Վաճառքոր հապատորեն կարող է ասել, որ վկա է հասունացած, կայացած նի նկարչի ծնունդի: Վաճառքորի նկարիչների աստղաբրույլ վրստահորեն մի նոր աստղով հարստացավ:

Գլոյանը կարողացել է այս ոճի նկարչություն ներ կատարել, որը նկատելի է անգամ առաջին քայլից՝ շրջանակի վրա կտորի ոչ ավանդական ձգելու ձևից, ներկերով կտորի վրա ոչ միայն քսելու, այլև հատուկ ձևով դմելու հնարքներից: Կտավներում հաճելիորեն զարմացնում են այն մանրագույն էլեմենտները, որոնք արյունք են վարպետ-ասեղնագործի մտածողության:

Կարինե Գլոյանը պայքարող ու հաղորդ մարդու կերպար է, որ առանց կողմնակի առաջ մղող ուժի՝ սեփական աշխատակիրությամբ հաղթահարում է արարման գաղտնիքների բանաձնը:

Նրա կյանքն ու գործը մեկը մյուսով պայմանավորված ամբողջականություն են, մեկը մյուսի բնական շարունակությունը:

Լուսինե ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գեղագիտության Ազգային Կենտրոնի Վաճառքորի մասնաճյուղի աշխատակից

Կարինե Գլոյանի աշխատանքներից՝ 35

ՄԻԵՎՆՈՒՅՆ Է՝ ԱՍԵՆԱՐՆՏԵԼԵԿՏՈՒԱՆ ԵՆՔ



մյուս հարևաններից՝ Թուրքիայից և Իրանից, որոնք համապատասխանաբար 65-րդ և 84-րդ տեղերում են: Աղբբեշանը ցու-

ցակում ընդգրկված չէ: ԱՄՐ երկուներից առաջատարը Ուսւաստանն է, որ զբաղեցնում է 34-րդ տեղը: Ցուցակը գլխավորում են Սկանդինավան երկրները Ըստիհան, Դամիհան և Ֆինլանդիհան: ԱՄՆ-ը 8-րդ տեղում է: Ձեկույցում բերված են նաև Հայաստանի ցուցանիշները՝ գրագիտությունը 99,40 տոկոս, միջնակարգ կորություն ունի բնակչության 86 տոկոսը, բարձրագույն կիրառյունը 28 տոկոսը: Յուրաքանչյուր 1000 բնակչին բաժին է ընկունք 257 հեռախոս և 65 համակարգիչ: Յուրաքանչյուր 10 հազար հայաստանցից ինտերնետից օգտվում է 491-ը:

ԿԵՄԵՐՈՎՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՐԱՎՈՐՅԱ ԴՊՐՈՑՔ



Մայիսի 28-ին Կեմերովոյի համար 95 հանրակրթական դպրոցի դահլիճում ուսումնական տարվա ավարտին նվիրված միջոցառում է: Այն սկսվում է Հայաստանի Հանրապետության հիմնի կատարումով: Երգում են 10-15 տարեկան հայ պատանիներն ու աղջկները: Յնչում են բանասիրողություններ հոգեհարազատ ու սիրելի նվիրված Հայաստանին, հայ ժողովրդին, հայունի բնությանը: Նազելի հայունիների խումբը պարում է «Ծաղկեփունջ»:

6 տարեկան փոքրիները բեմադրում են «Սկների ժողովը», «ճպուռն ու մրջոյնը», երգում ու արտասանում են հայերեն: Դահլիճում թևածում է հայկական երգն ու խոսքը, հնչում են երախտագիտության ու շնորհակալության խոսքեր... Այսօր հերթական տարեկերջյան հանդես է Կեմերովոյի կիրակօնյա հայ-



գրականության ուսուցչություններ Գոհար Բագրատյանը, Մարինե Աբրահամյանը, Երաժշտության ուսուցչություններ Լիլիթ Սութիայանը իրենց գործի գիտակցումով ու Նվիրվածությամբ են լծվել այդ հայրենասիրական գործին:

Նորաստեղծ է դպրոցը, բայց արդեն իր պատմությունն ու ավանդույթներն ունի: Տարին երկու անգամ ուսուցչներն ու աշակերտները հաշվետու համերգ են կազմակերպում ծնողների, բազմաթիվ հյուրերի համար: Ամեն տարի ապրիլի 24-ին մեր երեխանները իրենց արտասանություններով, երգերով հարգանքի տուրք են մատուցում եղեռնի զոհերի հիշատակին: Ոչ մեկին անտարբեր չի թողնում մանկական շուրբերից հնչող «Զարթիր լա», «Գետաշեն», «Հայ քաջեր», «Հայեր միացեք»:



Կական դպրոցում:

Հայկական դպրոց օտար ափերում... Ամեն մի հայի համար էլ պարզ է, որ դա սովորական դպրոց չէ, որտեղ գրել, կարդալ են սովորեցնում, ոչ, այս շատ ավելին է: Այս դպրոցը մի կամուրջ է, որը արդեն օտարության մեջ ծնված սերնին կապում է հայրենիքի հետ, սա մի փոքրիկ Հայաստան է, հայկական դպրոցը պայքարն է մի ժողովրդի, որը սփյուռք լինելով ամբողջ աշխարհում, դարեր շարունակ կը վոլու է նվաճում իր հայ մանալու իրավունքը: Եվ այդ պայքարում միակ գենքը մայրենի լեզուն է:

Արդեն իհնագ տարի է, որ Կեմերովոյում գործում է այս կիրակնօրյա կրթօջախը: Դպրոցը բացվել է Կեմերովոյի մարզի Ռուսաստանի Հայերի Սիրության նախագահ Սիրեկան Շովկհաննիսյանի ջանքերով և անձնական նախաձեռնությամբ: Մինչ այդ էլ նման փորձեր ապվել էին հայաշատ Կեմերովու քաղաքում, բայց ինչ-ինչ պատճառներով չեր ստացվել և միայն 2002թ. պ. Շովկհաննիսյանի շնորհիվ այդ վաղեմ էր հրազանը՝ իրականություն դարձալ:

Դպրոցն սկսել է գործել՝ ունենալով 15 աշակերտ: Դժմա նրանց թիվը հասնում է 50-ի: Դպրոց կարող է ընդունվել յուրաքանչյուր ցանկացող՝ առանց տարիքային սահմանափակման: Ուսուցումն անվճար է: այն անտեղ է նաև տարբերակ լինի ամեն մի հայ երեխայի: Այստեղ, հիմնականում ուսախոս հայ երեխանները սովորում են խոսել հայերեն, գրել, կարդալ, ծանոթանում են հայ գրականությանը, պատճենաթյանը, հայ ժողովրդի պահպանությանը, մշակույթին:



Երգերը, մանուկներ, որոնցից շատերը դեռ ոչ մի անգամ չեն եղել Հայաստանում, և որոնց համար Հայաստանը հենց իրենց հայկական դպրոցն է:

Իր գոյության առաջին կամ օրերից դպրոցի առջև կանգնել են բազմազան խնդիրներ, դժվարություններ՝ հաղթահարելի և անհաղթահարելի: Ամենագլխավոր խնդիրը դպրոցի շենքի, տեղի հարցն է: Առաջմ այն գործում է ռուսական համար 95 դպրոցում, վարձով վերցված դասասենյակներում: Կարևոր խնդիրներից է աշակերտներին դասագրերով, ընդհանրապես, հայ գրականությամբ ապահովելը:

Այս հարցում դպրոցին մեծ օգնություն է ցույց տալիս Կեմերովոյի հայկական համայնքի «Ուրարտու» բարեգործական կազմակերպության տնօրեն Արգիշտի Սիմոնյանը: Սակայն Հայաստանի դպրոցների համար հրատարակած այդ դասագրերը, (հատկապես հայ ժողովրդի պատմության դասագրերը) հիմնականում անմատչելի են ռուսախոս հայ երեխանների համար:

Ինչ խոսք, հնարավոր չէ միանգամած լուծել դպրոցի և նրա կազմակերպիչների առջև ծառացած բոլոր խնդիրները: Դրա համար ժամանակ է պետք: Ամենակարևորն այն է, որ դպրոցը կա, գործում է, որ կամ մարդիկ, որոնք պատրաստ են ամբողջովին նվիրվել այդ գործին և որ այլևս հայ մանուկների համար օտար չեն հնչում թումանյանի, Չարենցի, Սևակի անունները:

Մեծ չէ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը. հայոց լեզվի և

Մարինե ԱՐՄԵՆԻԱՆ

ԳՈՒՅՆԵՐ ՏՐԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՈԳԵՇՆՂԱՎՆ




Շուրջ հիսուն տարվա կենսագրություն և գեղեցիկ ավանդույթներ ունեցող Կանածորի գեղարվեստի դպրոցը, ավանդույթի համաձայն, ուսումնական տարին եզրափակեց հաշվետու ցուցահանդեսով: Դու-



գիշ մթնոլորտ էր ցուցարահներում: Զէ՞ որ անցած տարիները մշտապես լինելու են այս պատանիների հիշողության թանկագին բեռը:

